

---

Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ, պր. 24, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, 222 էջ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը լույս է ընծայել «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ» մատենաշարի 24-րդ պրակը: Այն ընդգրկում է բանասիրական գիտությունների թեկնածուներ Թամար Հայրապետյանի «Կոնստանդին Մելիք-Շահնազարյան՝ (Տմբլաչի Խաչան). (1857–1940 թթ.) կյանքն ու գործը» և Երագիկ Հարությունյանի «Հայ ժողովրդական սգո երգեր» աշխատությունները: Խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ալվարդ Ղազիյան:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժնում վաղուց ի վեր բանագետները ձեռնամուխ են եղել հայ բանագետ բանահավաքների կյանքի ու գործունեության ուսումնասիրությանը (Մ. Հարությունյան՝ «Մ. Աբեղյանի կյանքն ու գործը», Վ. Մվազյան՝ «Մարգիս Հայկունու կյանքն ու գործը», Մ. Վարդանյան «Տ. Նավասարդյանի ավանդը հայ բանագիտության պատմության մեջ», «Մ. Միանսարյանցի կյանքն ու գործը»): Այդ աշխատությունների շարքը լրացնում է բանահյուսության տեքստաբանության բաժնի ավագ գիտաշխատող Թամար Հայրապետյանի վերոհիշյալ արժեքավոր մենագրությունը: Այն՝ XIX դարի 70–80-ական թվականների հայ մշակույթի տարբեր բնագավառներում (արևելահայ երգիծական գրականություն, մանկագրություն, մանկավարժություն, ժողովրդագիտություն) իր եռանդուն գործունեությամբ աչքի ընկած երախտավորներից մեկի՝ Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի կյանքի և գործունեության առաջին լուրջ, համակողմանի ուսումնասիրությունն է: Հեղինակի առաջադիր խնդիրն է լուսաբանել և շրջանառության ոլորտ ընդգրկել արխիվային վավերագրերում, հիշողություններում, պարբերական մամուլում պահ-

պանված այն սկզբնաղբյուրները, որոնք ուղղակիորեն առնչվում են Կ. Մելիք-Շահնազարյանի բազմաբնույթ գործունեությանը: Հայ անվանի մտավորականի գրական-հասարակական, ժողովրդագիտական գործունեության ուսումնասիրմամբ Թ. Հայրապետյանը բացահայտում է նրա անուրանալի վաստակը XIX դ. 80–90-ական թվականներին արցախահայության հասարակական-քաղաքական, սոցիալ-կենցաղային հարաբերությունների ձևավորման գործընթացներում:

Աշխատությունը բաղկացած է հինգ գլխից: Առաջին գլխում հեղինակը մանրակրկիտ ներկայացնում է Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքը, հանրային (մանկավարժական ու գյուղատնտեսական) գործունեությունը, երկրորդ գլխում՝ Տմբլաչի Խաչանի «Ձուռնա-Տմբլաչ» և Շուշիի իրական – հրապարակային կյանքը, երրորդ գլխում՝ Տմբլաչի Խաչանի գրական գործունեությունը: Չորրորդ գլխում՝ Կ. Մելիք-Շահնազարյանը ներկայանում է որպես մանկագիր և թարգմանիչ, իսկ հինգերորդում Թ. Հայրապետյանն անդրադառնում է Կ. Մելիք-Շահնազարյանի ժողովրդագիտական գործունեությանը: Դրանցում հեղինակը հանգամանորեն բացահայտել է Կ. Մելիք-Շահնազարյանի գործունեության պատմամշակութային կարևորությունը, ճշտել նրա տեղն ու դերը հատկապես երգիծաբանության ասպարեզում, ներկայացրել Արցախի պատմագագազարական շրջանում զուռնա - տմբլա գործիքներով արմատավորված արարողական համակարգը (հարսանիք, տոնախմբություն)՝ դրանք դիտելով որպես ավանդական կենսընթացի կարևոր բաղադրիչներ: «Ձուռնա - Տմբլա» Ա, Բ գրքերում առկա թեմատիկ առումներով տարաբնույթ ֆելիետոնների վերլուծությամբ հեղինակը եզրահանգում է, որ Տմբլաչի Խաչանի երգիծանքը աստիճանա-

բար քաղաքականացվում է՝ փոքրիկ մանրապատումներում ընդգրկելով լայն շրջանակներ՝ մերձենալով ժամանակի առաջադրած առավել հրատապ խնդիրներին: Ըստ հեղինակի՝ Կ. Մելիք-Շահնագարյանի ժողովրդական խոսք ու գրույցով, բառ ու բանով, կենցաղային դրվագներով առլեցուն ֆելիետոններն են որոշակի դեր խաղացել հետագայում նրա ժողովրդագիտական հայացքների ձևավորման վրա: Ուսումնասիրության մեջ հանգամանորեն ներկայացված է նրա բանահավաքչական գործունեությունը՝ պայմանավորված արցախահայոց վիպական մեծ ու փոքր ծավալի այլաբանական բանաձևային բանահյուսական նմուշների գրառումներով (հեքիաթներ, գրույցներ, առակներ, հանելուկներ, առած-ասացվածքներ, անեծք - օրհնանքներ):

Անդրադառնալով Կ. Մելիք-Շահնագարյանի ազգագրական գործունեությանը՝ հեղինակը գտնում է, որ մասնագիտությամբ լինելով գյուղատնտես՝ նա երկրագործության, շերամապահության, մեղվաբուծության վերաբերյալ իր հետազոտություններով, փաստորեն, հայ հանրությանը ազգագրական գիտելիքների մի ողջ համակարգ է ներկայացրել: Աշխատության մեջ հանգամանորեն լուսաբանված է նաև նրա թարգմանչական գործունեությունը: Տիրապետելով ռուսերենին, ֆրանսերենին՝ հայերեն է թարգմանել Է. Կարամզինի «Թշվառ Լիզա», Գյոթեի «Ռայնեքե աղվեսը», Վերբիցկու «Պատրանք» և այլ ստեղծագործություններ:

Ուսումնասիրությանը կից ներկայացված են «Ձուռնա - Տնրլա» Ա, Բ ժողովածուների բարբառային բառերի բացատրական բառարան, Ղարաբաղի բարբառի քերականական առանձնահատկությունների վերաբերյալ հակիրճ տվյալներ, աղբյուրների և տեղանունների համառոտագրություններ, Կ. Մելիք-Շահնագարյանի տոհմաճյուղը ներկայացնող գծապատկեր, օգտագործած գրականության ցանկ, ռուսերեն ու անգլերեն ամփոփումներ:

Թ. Հայրապետյանի՝ Կոնստանդին Մելիք-Շահնագարյանի կյանքին ու գործունեությանը նվիրված մենագրությունը

կարևոր ներդրում է հայ մշակույթի, մասնավորապես, հայ բանագիտության պատմության մեջ:

Պրակում ընդգրկված է նաև Երազիկ Հարությունյանի «Սգո երգեր» մենագրությունը: Աշխատանքն ունի արդիական նշանակություն, քանի որ սգո երգերը դարերի խորքից մեզ հասած այն հնագույն ժանրերից են, որը մինչ օրս կենցաղավարում է և նախկինի պես համարվում թաղման ծեսի յուրատիպ բաղադրամաս: Հեղինակը հնագիտական և պատմաազգագրական տարաբնույթ նյութերի վերլուծությամբ փորձել է ներկայացնել սգերգերի նախաստեղծ էության ընդհանուր ուրվագիծը, միաժամանակ բաղադրատեղի հնագույնը ժամանակակից սգերգերի հետ եզրահանգել, որ դարերի ընթացքում դրանց հիմնական գաղափարները, գեղարվեստաարտահայտչական միջոցները շատ քիչ փոփոխության են ենթարկվել:

Մենագրությունը կազմված է ներածությունից և վեց գլխից: Ներածականում հեղինակն անդրադառնում է սգերգերի վերաբերյալ հայ պատմիչների հաղորդած վերլուծություններին, հայ բանագետ-բանահավաքների կողմից հրատարակված բանահյուսական ժողովածուներում առկա սգերգերի աղբյուրագիտական կարևորությանը և այլ խնդիրներին: Առաջին գլխում հեղինակն անդրադառնում է թաղմանն առնչվող հայ ժողովրդական հեթանոսական և միջնադարյան սովորություններին ու սգո երգերում դրանց դրսևորումներին: Երկրորդ գլխում խոսում է մահվան, հոգու և հանդերձյալ կյանքի վերաբերյալ կենցաղում լայն տարածում գտած հայ ժողովրդական հավատալիքների ու նախապաշարումների մասին: Երրորդ գլխում ներկայացվում է XIX – XX դարերում հուղարկավորության ծեսի ընթացակարգում սգո երգերի դերը: Չորրորդ գլուխը նվիրված է հայ ժողովրդական սգերգերի ժանրային ու գեղարվեստական առանձնահատկություններին, մոտիվային համակարգին, կառուցվածքային միավորներին ու դասակարգման հիմունքներին: Հինգերորդում Ե. Հարությունյանն անդրադառնում է արտածիսական սգո երգերին (դրանք ոչ թե հուղար-

կալիտրության ընթացքում հորինված երգերն են, այլ՝ ողբերգական դեպքերի առնչությամբ հյուսված այն երգերը, որոնք սովորաբար երգվում են տխուր առիթներով): Վեցերորդ գլուխը վերաբերում է տապալանագրերի, բանահյուսական այլ ժանրերի, միջնադարյան գանձերի և գրական ողբի հետ՝ սգերգերի ունեցած աղերսներին: Աշխատանքն ավարտվում է հայերեն և ռուսերեն ամփոփումներով, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերով:

Երազիկ Հարությունյանի աշխատությունն առաջին լուրջ ուսումնասիրությունն

է, որում նա սկզբնաղբյուրային կարևորություններ կայացնող փաստերի համակողմանի լուսաբանմամբ վերահաստատում է սգո երգերի հազարամյա գոյության իրողությունը: Հայ ազգագրության և բանահյուսության նյութերի և ուսումնասիրությունների 24-րդ պրակում ընդգրկված վերոհիշյալ մենագրությունները կարևոր ներդրում են հայ բանագիտության պատմության և տեսության բնագավառներում:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ